ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

- Աջակցություն Զորահավաքի և զորակոչի համալրման ծառայության Վայոց ձորի մարզային ստորաբաժանմանը 2024թ պարտադիր ժամկետային զորակոչի աշխատանքները իրականացնելու ուղղությամբ՝ ձմեռային և ամառային զորակոչերի ընթացքում պարտադիր զինվորական զորակոչից տարկետումների տրամադրում քաղաքացիներին՝ նրանց անձնական գործերի ուսումնասիրություն և եզրակացությունների կազմում:
- Զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներ և պարապմունքներ, 2024թ. մարտ ամսին անցկացվել է ուսումնավարժանք՝ մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների մասնակցությամբ: Աշխատակիցներին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն ուսումնական վարժանքի իրականացման համար:
- Աշխատանքներ են տարվել ԵԿՄ կազմակերպության հետ՝ Գեղարքունիքի մարզում 8-15 տարեկան երեխաների ամառային ռազմամարզական ճամբարին Ջերմուկ և Արենի համայնքներից մասնակցելու նպատակով:
- Կրակային պատրաստության հետ կապված աշխատանքներ են տարվել 5-րդ ԲԿ-ի համապատասխան աշխատակիցների հետ՝ կազմվել են մասնակիցների ցուցակներ, ժամանակացույց և այլն:
- Կազմվել է մարզպետի աշխատակազմի անձնակազմի՝ արտակարգ իրավիճակներում տարահանման սխեմաները, և փակցվել շենքի բոլոր հարկերի առավել տեսանելի հատվածներում:
- Մշակվել է մարզպետի աշխատակազմի և 5-րդ բանակային կորպուսի միջև փոխգործակցության նոր պլան, համաձայնեցվել է ԲԿ-ի հրամանատարության հետ:

- Քաղաքացիական պաշտպանության աշխատանքներ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2024թ. ուսումնական տարում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների վերապատրաստման ժամանակացույցի կազմում և ներկայացում: Տարվա ընթացքում ըստ հաստատված պլան-ժամանակացույցի մասնակցել են ավել քան 50 աշխատակիցներ, աշխատանքները շարունակական են տարվա ընթացքում:
- Աջակցություն ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությանը համայնքների բնակավայրերում և հանրակրթական դպրոցներում ուսումնական վարժանքների իրականացման աշխատանքներին:
- «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ տարվել են աշխատանքներ Ջերմուկ և Վայք համայնքների բնակիչների և դպրոցականների հետ կազմակերպելու դասընթացներ՝ պայթուցիկ զինամթերքի վտանգի իրազեկումը /ՊԶՎԻ/ թեմաներով, որի նպատակն է բարձրացնել անվտանգ վարքագծի կանոնների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը:
- Մարզի քաղաքային բնակավայրերում թաքստոցների վիճակի ուսումնասիրության հետ կապված, կատարվել է ուսումնասիրություն Եղեգնաձոր և Վայք քաղաքների բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերում, այդ կապակցությամբ համապատասխան գրություններ է ուղարկվել համայնքի ղեկավարներին: